

**Հայտին առնչվող հարցումների վերաբերյալ Պարզաբանում No.6**

**Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման ծրագիր**

**Երևանի ՋԷԿ-ի 220/110/35 կՎ ենթակայանի վերակառուցման համար կայանի նախագծման, մատակարարման և տեղակայման ձեռքբերում  
(ICB No. ETNIP\_YTPC\_ICB\_1/2015)**

**21-ր նոյեմբերի, 2015 թ.**

No.	Հարցումներ հայտատուների կողմից	Պարզաբանում Գործատուի կողմից
1.	<p><b>ONAN-ի կամ ONAF-ի հետ կապված PTR սպառում</b>  Խնդրում ենք հաստատել, որ «Տեխնիկական աղյուսակ – հիմնական տվյալներ, Գործուստներ» փաստաթղթի 7 (8) կետում նշված կարճ միացման կորստի մեծությունը բերված է ONAN հզորության:</p>	<p>Այո, դա բերված է ONAN հզորության:  Եթե Հայտատուին հայտնի են այլ ստանդարտներ, ապա նա պետք է համաձայնեցնի Գործատուի հետ:</p>
2.	<p><b>Հայտերին առնչվող հարցումների վերաբերյալ Պարզաբանում No.4, կետ 39, ծավալ / քանակ</b>  Հայտերին առնչվող հարցումների վերաբերյալ Պարզաբանում No.4, կետ 39 և գնային աղյուսակի կետ 1.1.3.7 հոսանքի տրանսֆորմատորների ստույգ քանակի վերաբերյալ:  Ըստ միագիծ սխեմայի և գլխավոր հատակագծի նախնական գծագրերի՝ 110 կՎ լարման միաֆազ հոսանքի տրանսֆորմատորների ստույգ քանակը 54 է:</p> <p>A. Խնդրում ենք հաստատել, որ 110 կՎ լարման հոսանքի տրանսֆորմատորների ճշգրիտ հաշված քանակը, ներառյալ դրանց հիմքերը և համապատասխան սարքակազմի նյութերը պետք է ներառվեն Հայտատուի մատակարարման ծավալում:</p> <p>B. Խնդրում ենք նաև խորհուրդ տալ, թե արդյոք մեզ թույլ է տրվում փոփոխել գնային աղյուսակի 1.1.3.7 կետի բովանդակությունը՝ 18 հատը դարձնելով 54 հատ կամ «հատ» բառը փոխարինել «լրակազմ» բառով: Եթե ոչ, ապա խնդրում ենք խորհուրդ տալ, թե ինչպես մենք պետք է լուծենք այս հարցը գնային աղյուսակում:</p>	<p>A. Այո, 110 կՎ լարման հոսանքի տրանսֆորմատորները, ներառյալ դրանց հիմքերը և համապատասխան սարքակազմի նյութերը պետք է ներառվեն Հայտատուի մատակարարման ծավալում:</p> <p>B. Այո, ձեր ընկալումը ճիշտ է: 110 կՎ տրանսֆորմատորների քանակը պետք է լինի 54: Խնդրում ենք շտկել քանակը համապատասխան գնային աղյուսակներում և ներկայացնել ձեր առաջարկը 54 հատ 110 կՎ լարման հոսանքի տրանսֆորմատորների համար:</p>
3.	<p><b>Գնային աղյուսակ, կետ 1.1.1.8, ծավալ / քանակ</b>  Գնային աղյուսակի կետ 1.1.1.8, 220 կՎ լարման մեկուսիչների վերաբերյալ:  Ըստ միագիծ սխեմայի և նախնական գլխավոր հատակագծի</p>	<p>220 կՎ լարման մեկուսիչների քանակը պետք է լինի 16: Եվս մի անգամ տե՛ս միագիծ սխեման և համապատասխան գծագրի կտրվածքը, ինչը կից տրվում է սույն Պարզաբանում No. 6-ին:</p>

No.	Հարցումներ հայտատուների կողմից	Պարզաբանում Գործատուի կողմից
	<p>գծագրերի՝ 220 կՎ լարման մեկուսիչների ստույգ քանակը պետք է լինի 24, այլ ոչ թե 16, ինչպես նշված է գնային աղյուսակում:</p> <p>A. Խնդրում ենք հաստատել, որ 220 կՎ լարման մեկուսիչների ճշգրիտ հաշված քանակը, ներառյալ դրանց հիմքերը և համապատասխան սարքակազմի նյութերը պետք է ներառվեն Հայտատուի մատակարարման ծավալում:</p> <p>B. Խնդրում ենք նաև խորհուրդ տալ, թե արդյոք մեզ թույլ է տրվում փոփոխել գնային աղյուսակի 1.1.1.8 կետի բովանդակությունը՝ 16 հատը դարձնելով 24 հատ: Եթե ոչ, ապա խնդրում ենք խորհուրդ տալ, թե ինչպես մենք պետք է լուծենք այս հարցը գնային աղյուսակում:</p>	<p>Հայտատուն պետք է իրականացնի միացում շլեյֆով: The number of</p> <p>A. Այո, 220 կՎ լարման հենարանային մեկուսիչները, ներառյալ դրանց հիմքերը և համապատասխան սարքակազմի նյութերը պետք է ներառվեն Հայտատուի մատակարարման ծավալում:</p> <p>B. Ոչ, 220 կՎ լարման մեկուսիչների ստույգ քանակը 16 է:</p>
4.	<p>Համաձայն բարձր լարման ենթակայանների կառուցման նորմերի՝ պետք է նախատեսվեն դեպի բարձր լարման սարքավորումների և մասնավորապես 220 կՎ և 110 կՎ լարման անջատիչի շարժաբեքների, 220 կՎ և 110 կՎ լարման բաժանիչների շարժաբեքների մուտքի անցուղիներ:</p> <p>20.1 Խնդրում ենք հաստատել, որ այս մուտքի անցուղիները պետք է նախատեսվեն միայն բարձր լարման սարքավորումների համար, որոնք ունեն շարժաբեքներ, այսինքն՝ անջատիչներ, բաժանիչներ:</p> <p>20.2 Խնդրում ենք խորհուրդ տալ, թե առնվազն ինչ տեսակի մուտքի անցուղիներ պետք է նախատեսվեն, օրինակ՝ բետոնե հիմքի վրա եզրաքարերով սալիկներ:</p> <p>20.3 Խնդրում ենք խորհուրդ տալ, թե գնային աղյուսակի որ կետում պետք է ներառվեն մուտքի անցուղիները:</p>	<p>20.1 Այո, մենք հաստատում ենք:</p> <p>20.2 Պետք է նախատեսվեն բետոնե անցուղիներ:</p> <p>20.3 Անցուղիների ծախսերը պետք է ներառվեն համապատասխան գնային աղյուսակի շինարարական աշխատանքների ծավալում:</p>
5.	<p><b>Շինարարական աշխատանք, տեղամասի նախապատրաստում</b></p> <p>110 կՎ լարման օդամեկուսացմամբ բաշխիչ սարքի կառուցման տեղամասում շինարարական աշխատանքների նախապատրաստման վերաբերյալ հարց:</p> <p>110 կՎ լարման ենթակայանի կառուցման տեղամաս այցելելուց և ուսումնասիրելուց հետո տարածքում հայտնաբերվեցին տիղմ, կեղտաջրեր: Համաձայն մրցութային տեխնիկական բնութագրերի պահանջների՝ աշխատանքների որակի վերաբերյալ ընդհանուր առմամբ և բարձրորակ կառուցման աշխատանքների իրականացման վերաբերյալ մասնավորապես, ինչպես նաև ըստ կառուցման մասնագետների հայտարարության անհրաժեշտ կլինի հեռացնել</p>	<p>Այո, ձեր ընկալումը ճիշտ է: Ինչ վերաբերում է գրունտային տիղմի հեռացմանը և լցնելուն, ապա տեղեկացնում ենք, որ դա կախված է գրունտի ուսումնասիրության արդյունքներից:</p>

No.	Հարցումներ հայտատուների կողմից	Պարզաբանում Գործատուի կողմից
	<p>գրունտային տիղմը (ինչը խոչընդոտում է սարքավորումների հիմքերի տեղակայման համար հողահեռացման աշխատանքներին) տիղմով և կեղտաջրերով լցված տարածքի հատակից, այնուհետև լցնել այն նոր գրունտով (կառուցման տեղամասից գրունտի նախնական հեռացումը կազմում է մոտավորապես 1000 խմ), որին կհաջորդի տոփանումը:</p> <p>Այնուհետև հնարավոր կլինի 110 կՎ արտաքին տեղադրման բաշխիչ սարքի տարածքը նախապատրաստել կառուցման աշխատանքների մեկնարկի համար: Միայն կատարելով նշված նվազագույն գործողությունները՝ հետագա կառուցման և տեղակայման աշխատանքների համար հնարավոր կլինի ապահովել նվազագույն որակ:</p> <p>Խնդրում ենք հաստատել, թե արդյոք մենք ճիշտ ենք ընկալել 110 կՎ-ի մասի կառուցման տեղամասի նախապատրաստական աշխատանքների սկզբունքը:</p>	
6.	<p>Հաշվի առնելով տարբեր փաստաթղթերի ներկայացումը, տարբեր մատակարարողների և տեղական ռեսուրսների հետ առնչությունը, սույն մրցույթի մեծ ծավալը և բարդությունը, ինչպես նաև Հնդկաստանում երկարատև տոները՝ մենք խնդրում ենք ձեզ երկարաձգել ներկայացման վերջնաժամկետը մինչև 2015 թ.-ի դեկտեմբերի 30 (չորս շաբաթով) և մեզ ընդառաջել:</p>	Հետագա երկարաձգում հնարավոր չէ:
7.	<p><b>Ընդհանուր</b> 110 կՎ-ի կողմի սնուցիչների քանակը նվազել է 21-ից մինչև 19-ը վերանայված/առաջարկված փոփոխություններում: Ինչպես մենք ենք ընկալում, գեներատորի սնուցիչների քանակը նվազել է 7-ից մինչև 2-ը: Խնդրում ենք հաստատել, թե արդյոք մենք ճիշտ ենք ընկալել:</p>	Ձեր հարցը հստակ չէ:
8.	<p><b>Գծային սահմանափակիչներ գծային սնուցիչների վրա</b> 220 կՎ լարման գծերի վրա գծային սահմանափակիչներ նշված չեն: Խնդրում ենք հաստատել:</p>	Այս հարցին մենք մի քանի անգամ պատասխանել ենք:
9.	<p><b>Բաշխիչ պահարան</b> 5 բաշխիչ պահարան նշված է տեղակայման աղյուսակում, մինչդեռ դրանք ընդգրկված չեն նյութերի մատակարարման աղյուսակում (Աղյուսակ 1): Խնդրում ենք պարզաբանել:</p>	Դուք ճիշտ չեք: Դրանք ընդգրկված են գնային աղյուսակ 1-ում:
10.	<p><b>Տեղակայման աղյուսակի կետ 1.3.4-ից 1.3.8 և 1.3.10</b> Ըստ նկարագրության՝ քանակները նշված են յուրաքանչյուր կետի դիմաց, սակայն այն նշված է որպես հաստատագրված գումար</p>	Տե՛ս Պարզաբանում No.2-ի կետ 37-ը:

No.	Հարցումներ հայտատուների կողմից	Պարզաբանում Գործատուի կողմից
	քանակի սյունակում: Խնդրում ենք հաստատել, թե արդյոք նկարագրության մեջ նշված քանակը պետք է գերակշռի, թե՞ այն պետք է հաշվարկվի հայտատուի կողմից (այսինքն՝ հաստատագրված գումար):	
11.	<b>220 կՎ-ի մասում պահուստային բջիջ</b> Հետագա պահուստային բջիջի համար մեջտեղի հեծանը և անկյունային հենաայունները նշված չեն առաջարկվող գլխավոր հատակագծում: Խնդրում ենք հաստատել, եթե դա պահանջվում է:	Այո, այն պահանջվում է:
12.	<b>Առաջարկվող 6,6 կՎ լարման բաշխիչ սարք</b> 35 կՎ լարման բաշխիչ սարքի սենյակում գտնվող 6,6 կՎ լարման բաշխիչ սարքի միագլիծ սխեման տրված չէ գծագրում: Խնդրում ենք այն տրամադրել:	Մենք չունենք 6,6 կՎ լարման սարքավորում:
13.	<b>Առկա / հին 220 կՎ լարման ենթակայան</b> Ըստ աշխատանքների ծավալի՝ 220 կՎ լարման ենթակայանը անհրաժեշտ է վերակառուցել: Խնդրում ենք պարզաբանել, թե արդյոք հիմքերի հեռացումը և այլ շինարարական աշխատանքներ ներառված են հայտատուի ծավալում:	Մենք ձեռք տեղեկացնում ենք, որ երկրորդ Գլխավոր Կապալառու ընդգրկված չի լինելու այս ծրագրում:
14.	<b>110/6.6 կՎ լարման տրանսֆորմատորի սնուցիչներ</b> Աշխատանքների ծավալի 1.2.1.1.4.2 կետում նշված է, որ 110/6,6 կՎ լարման տրանսֆորմատորի սնուցիչների քանակը 4 է: Այնուամենայնիվ, պարզ չէ, թե նրանք գեներատորի տրանսֆորմատորներ են, թե բեռ հաղորդող տրանսֆորմատորներ: Ոչինչ նշված չէ երկրորդային 6,6 կՎ լարման կողմում: Խնդրում ենք պարզաբանել:	Մենք չունենք 6,6 կՎ լարման տրանսֆորմատորի սնուցիչներ:
15.	<b>Կետ 1.2.4.2.1</b> Աշխատանքների ծավալում նշված է, որ «110 կՎ լարման արտաքին ենթակայանի համար սույն պայմանագիրը ներառում է այստեղ նշված սարքավորումների առնվազն մատակարարումը, տեղակայումը և միացումը առկա 110 կՎ լարման ենթակայանին կից ազատ տարածքում»: Խնդրում ենք բացատրել, թե արդյոք 110 կՎ լարման սարքավորումները պետք է վերակառուցվեն նույն տեղանքներում, որտեղ գտնվում են այժմ, թե՞ այդ սարքավորումները պետք է տեղափոխվեն մեկ այլ տարածք (ազատ տարածք)՝ համաձայն սույն կետի:	Տե՛ս մեր նախորդ պատասխանները:
16.	<b>1.2.1.4.1.1 և 1.2.1.4.1.2</b>	Խնդրում ենք հետևել մրցութային փաստաթղթերում նշված

No.	Հարցումներ հայտատուների կողմից	Պարզաբանում Գործատուի կողմից
	1.2.1.4.1.1 կետում նշված է, որ անջատիչը պետք է լինի եռափուլ, մինչդեռ 1.2.4.1.1.2 կետում նշված է, որ անջատիչը պետք է լինի միափուլ: Ավտոտրանսֆորմատորի անջատիչը նույնպես նշված է, որ պետք է լինի միափուլ: Ընդհանուր առմամբ, ըստ ստանդարտ պրակտիկայի, գծային անջատիչները միափուլ են, մինչդեռ տրանսֆորմատորի անջատիչները աշխատում են խմբավորված: Խնդրում ենք պարզաբանել:	սկզբունքին:
17.	<b>Պարպիչներ 220 կՎ լարման գծերի վրա</b> Պարպիչները նախատեսված են 220 կՎ լարման ավտոտրանսֆորմատորների և 220 կՎ լարման հաղորդաձողի համար, այլ ոչ թե 220 կՎ լարման գծի համար: Խնդրում ենք հաստատել պահանջը:	Տե՛ս Պարզաբանում No. 5-ի կետ 16-ը:
18.	<b>Պարպիչներ 110 կՎ լարման դողի վրա</b> 3 պարպիչ է առաջարկվում 110 կՎ լարման գլխավոր դող 1-ի և 2-ի վրա, մինչդեռ միայն 1 պարպիչ է նախատեսված 110 կՎ լարման transfer bus-ի համար: Մենք կարծում ենք, որ դա ստանդարտ պրակտիկա չէ: Արդյո՞ք ամպրոպային կամ կոմուտացիոն գերլարումները կտարբերվեն գլխավոր դողի և transfer bus-ի միջև:	Այո, ձեր սկզբունքը ճիշտ կլինի, եթե դուք կարողանաք բացատրել «transfer bus»-ի նշանակությունը:
19.	<b>35 կՎ լարման պարպիչներ</b> Տեղակայելով պարպիչները 35 կՎ լարման բաշխիչ սարքի կողմում, այլ ոչ թե 35 կՎ լարման գծի կողմում՝ 35 կՎ լարման մալուխները կենթարկվեն գերլարման: Խնդրում ենք հաստատել, որ պարպիչները պետք է տեղադրվեն ելնող գծի պորտալի կառուցվածքների վրա:	Դա կախված է Կապալառուի կողմից իրականացվելիք նախագծային հաշվարկներից:
20.	<b>Պաշտպանության համակարգ, էջ 570 և 571</b> Խնդրում ենք բացատրել, թե ինչ տեսակի են <b>9S, 10S, S2</b> և <b>S5</b> տրանսֆորմատորները: Այդ նկարագրությունը բացակայում է մրցութային տեխնիկական բնութագրերում:	Ինչի՞ համար են ձեզ հարկավոր այդ տրանսֆորմատորների տեսակները:
21.	<b>220 կՎ և 110 կՎ լարման գծերի մյուս ծայրերում պաշտպանություն</b> 566-րդ էջում նշված է. «Նախատեսել մեկ միանման միկրոպրոցեսորային պաշտպանություն 220 կՎ լարման գծերի յուրաքանչյուր հակառակ ծայրում» և նույնը պահանջվում է բոլոր 110 կՎ լարման սնուցիչների համար: Խնդրում ենք հաստատել, թե արդյոք մենք պետք է նախատեսենք առնվազն մեկ նմանատիպ պաշտպանություն նաև մյուս ծայրի ենթակայանի համար:	Այս հարցին մենք մի քանի անգամ պատասխանել ենք:
22.	<b>ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՂՅՈՒՄԱԿ – 220/110 կՎ 200 ՄՎԱ</b>	Այո, դուք ճիշտ եք: Յուրի և փաթույթի ջերմաստիճանի բարձրացման

No.	Հարցումներ հայտատուների կողմից	Պարզաբանում Գործատուի կողմից
	<p>ավտոտրանսֆորմատորի վերաբերյալ տեղեկատվության համար տվյալներ. 3. Նոմինալ հզորություն, ջերմաստիճանի բարձրացում և գերբեռնվածություն</p> <p>Խնդրում ենք հաստատել յուրի և փաթույթի ջերմաստիճանի բարձրացման միավորը Կելվին է, թե՞ Ցելսիուս:</p>	<p>միավորը պետք է լինի Ցելսիուսի ջերմաստիճանով:</p>
23.	<p><b>"Armenia YTPC Substation_final_corrected_upd.pdf" էջ 111/691 Հայտի երաշխիք</b></p> <p>Հայտի երաշխիքի ձևի մեջ առկա է հղում «ICC Publication No. 458»-ին: Խնդրում ենք հաստատել, որ այս հղումը/փաստաթուղթը դեռևս վավերական է կամ տվեք այլ խորհուրդ:</p>	<p>Այո, դուք ճիշտ եք, ICC Publication No. 458-ը փոխարինվել է ICC Publication No. 758-ով: Հայտի երաշխիքը պետք է թողարկվի՝ ըստ ICC Publication No. 758-ի:</p>